

աշխատութիւններ, Ալմանախի թէ խմբագրութիւնը և թէ հրատարակչական գործը կազմակերպելը իր վրայ է առել պ. Սո. Լիսիցեանը:

Այս նոյեմբերին լրացաւ մեր նշանաւոր բանասէր Գարեգին եպ. Սրուանձտեանցի մահուան 17 տարին, այդ առիթով այս համարում տալիս ենք նրա պատկերն և կենսագրութիւնը մեր հանգուցեալ աշխատակից Յովհ. ք. Մկրեանի գրած, որ ժամանակին չէր թոյլատրել ամբողջութեամբ տպագրել տաճկաստանի հայ գրաքննիչը:

+ Բագլում վախճանուեց բժ. Միսաք Արամեանցը, որ յայտնի գրական և հասարակական գործիչ էր 60—70 ական թուերին և ջերմ հալածող էր կեղծ ազատամտական ուղղութեան. ինքը սիրող հայ ժողովրդին և հայ եկեղեցու, միևնոյն ժամանակ հմուտ հայագէտ էր և պատմագէտ և համոզուած ազգասէր: Նրա գրուածները զետեղուած զանազան լրագրներում և գլխաւորապէս «Նորդարշում»: Աշխատակցում էր նաև «Հումայշին»:—Յարգանք նրա յիշատակին:

Արագրներում կարդում ենք, որ տաճիկ կառավարութիւնը վերջապէս որոշել է ոչնչացնել կ. Պօլսի շները և սահմանադրութեան բարեբեր հետևանքները տարածուեցան ամենից առաջ... շների վրայ: Արդ՝ քանի որ կ. Պօլսի անթիւ շները այսուհետև պատմութեան պիտի պատկանեն՝ խմբագրութիւնս ներկայ համարում տպագրում է հանգ. Մարկոս Աղաբէգեանի մի յօդուած, նուիրուած այդ հոչակաւոր «Պասակարգային»: Աղաբէգեանը իւր վերջին օրերն էր ուղարկել այն տպագրելու «Հիւսաք Տէր-Մեսրոպեանց» ստորագրութեամբ:



ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԹԵՐ

1. Ներսէս ք. Տէր-Կարապետեանց Ատենախօսութիւն. Թիֆլիս 1909.—Մի հոգեբուլի քարոզ է խօսուած Բագուի հայոց եկեղեցում վեհ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի օծման օրը: Առհասարակ պէտք է ասել, որ Հ. Ներսէսը խօսելու ձի բք ունի և հայ հոգին բացարձակապէս երեսում է նրա հրատարակած քարոզների մէջ, միայն խորհուրդ կտայինք բազմաթիւ կրկնութիւններից խուսափել:

2. Pessimist. Ի՞նչ է հասարակութիւնը. Թիֆլիս 1909, արտապուած «Հումայշ» ամսագրից:

3. Կրօնի գասատւութիւնը ա. բաժանմունքում. կազմեց Քամալեանց Ս. դպիր. Թիֆլիս 1909:

Խմբագիր հրատարակիչ՝ ԳիհՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ
